ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/84

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.06.2018թ. թիվ 03/26-3/10936-18 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02542882/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 13.06.2018թ. թիվ 120 գրության հիման վրա, 15.06.2018թ. նախաձեռնել է «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 13.06.2018թ. թիվ 120 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված դեղորայքի ձեռք բերման ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնանշման հարցմանը հայտ է ներկայացրել և որոշ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն: ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանանների առկայության վերաբերյալ:

Սահմանված ժամկետում կոմիտեից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, որի համաձայն՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ 1,294,785 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է օրենքով նախատեսված ժամկետանց պարտավորությունների շեմը: Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն 25.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված թիվ RL-282 գրությամբ հայտնել է հետևյալը.

«1. 2018թ. հունվարի 1-ից հետո բոլոր հարկ վճարողները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ իրենց հարկային պարտավորությունները կատարել են միասնական

հաշվեհամարին գումարներ փոխանցելով և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ն այդ միևնույն հաշվեհամարից մարել է հարկ վճարողի հարկային պարտավորությունները:

Նշված կարգի կիրառմամբ հարկ վճարողները՝ տվյալ դեպքում նաև մենք, զրկված ենք եղել մեր ցանկությամբ կոնկրետ հարկատեսակով, կոնկրետ հաշվեհամարին վճարում կատարելու հնարավորությունից:

Նշված կարգավորման և դրա հետ կապված տեխնիկական խնդիրների հետևանքով Ընկերությունը «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնանշման հարցմանը հայտ ներկայացնելու պահին ունեցել է 1,294,785 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որը 24.05.2018թ. թիվ 001185 վճարման անդորրագրով ամբողջությամբ մարվել է:

Միաժամանակ նշենք, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների վերաբերյալ տեղեկանքներում հստակ երևում է, որ ընկերությունն ունի 44,864,010 ՀՀ դրամ գումարի դեբետային մնացորդ:

2. 07 հունիսի 2018թ. պատվիրատուն կայացրել է թիվ 5 արձանագրությունը, որի 2.3 կետով նշել է. «հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված եզրակացությունը, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ տրվում է մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար:

Նշված արձանագրությունը Ընկերությունը էլ. փոստի միջոցով ստացել է 11 հունիսի 2018թ. արդեն իսկ հարկային պարտավորության կատարման և անհամապատասխանությունը շտկված լինելու ապացույց հանդիսացող տեղեկանքները և վճարման անդորրագիրը ուղարկել է պատվիրատուի նույն էլ. փոստին:

Նշված փաստով Ընկերությունը կատարել է Պատվիրատուի թիվ 5 արձանագրության 2.3 կետով սահմանված պահանջը, այն է՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է անհամապատասխանությունը:

Այս ամենից հետո Պատվիրատուն 2018թ. հունիսի 12-ին կայացնում է թիվ 6 արձանագրությունը և 1.1 կետով նշում է՝ «ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել»:

Հարկ եմ համարում նշել, որ թիվ 5 արձանագրությամբ պահանջված անհամապատասխանությունը մեր կողմից շտկվել է և թիվ 6 արձանագրությունը կայացնելու անհրաժեշտություն այս դեպքում չկար»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Էմիլ Դավթյանը, Հեղնար Ղարիբյանը, Արմինե Ղուկասյանը և Վարդան Միքայելյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2018թ. թիվ 03/26-3/10936-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 13.06.2018թ. թիվ 120 գրությունը, «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.05.2018թ. նիստի թիվ 2, 31.05.2018թ. նիստի թիվ 3, 01.06.2018թ. նիստի թիվ 4, 07.06.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի գնման նպատակով կազմակերպված «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 20, 38, 40, 45, 47, 48, 50, 55 և 57 չափաբաժինների մասով:

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ

բավարարում է «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 23.05.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները կազմել են՝ 20-րդ չափաբաժնի մասով՝ 55491.5 ՀՀ դրամ, 38-րդ չափաբաժնի մասով՝ 112900.0 ՀՀ դրամ, 40-րդ չափաբաժնի մասով՝ 602280.0 ՀՀ դրամ, 45-րդ չափաբաժնի մասով՝ 279000.0 ՀՀ դրամ, 47-րդ չափաբաժնի մասով՝ 23592.0 ՀՀ դրամ, 48-րդ չափաբաժնի մասով՝ 138530.0 ՀՀ դրամ, 50-րդ չափաբաժնի մասով՝ 100825.0 ՀՀ դրամ, 55-րդ չափաբաժնի մասով՝ 377535.0 ՀՀ դրամ, և 57-րդ չափաբաժնի մասով՝ 908800.0 ՀՀ դրամ:

01.06.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի «ա» ենթակետով Հանձնաժողովը որոշել է՝ Ընթացակարգի 45-րդ և 55-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 22.05.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 1294785.0 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 07.06.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով արձանագրել է, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն, համաձայն որի «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, իսկ 2.3 կետով՝ Ընկերությանն առաջարկել է մեկ աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունը:

12.06.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում Ընկերության կողմից անհամապատասխանությունը չի շտկվել, և նույն արձանագրության 1.2 կետով որոշել է մերժել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին

տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի

պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

• 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված

հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից ժամանակին կատարվել են հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումները, մասնավորապես, 18.05.2018թ. Ընկերությունը «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ եկամտային հարկի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ հարկային տեսչության միասնական հարկային հաշվին է փոխանցել 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ գումար, սակայն վճարված գումարից հարկային մարմնի կողմից մարվել են Ընկերության հարկային պարտավորությունները՝ այնպիսի հարկատեսակների գծով, որոնց վճարման ժամկետը թույլ էր տալիս դրանք մարել ավելի ուշ, մինչդեռ ապրիլ ամսվա եկամտային հարկի, ինչպես նաև ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարները դրանց վճարման վերջնաժամկետը՝ 20.05.2018թ., վրա հասնելուց հետո, համակարգում արտացոլվել են որպես ժամկետանց հարկային պարտավորություններ: Այսինքն, հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով պայմանավորված՝ Ընկերությունը զրկված է եղել հնարավորությունից ինքնուրույն որոշելու, թե կոնկրետ որ հարկատեսակի մարմանը պետք է ուղղվի վճարված գումարը: Միաժամանակ, Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ առկա պարտավորությունը 24.05.2018թ. թիվ 001185 վճարման անդորրագրով Ընկերության կողմից ամբողջությամբ մարվել է:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց՝

- Ընկերության կողմից 18.05.2018թ. «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ եկամտային հարկի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ հարկային տեսչության միասնական հարկային հաշվին փոխանցված 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 02.07.2018թ. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 20.05.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 26.06.2018թ. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 22.05.2018թ. դրությամբ ունեցել է 1.139.299 ՀՀ դրամի չափով եկամտային հարկի գծով և 155.486 ՀՀ դրամի չափով ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով հարկային պարտավորություն:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 07.06.2018թ. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն՝ Ընկերությունը 06.06.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 22.05.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 1294785.0 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավուրություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ 18.05.2018թ. Ընկերության կողմից եկամտային հարկի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ միասնական հարկային հաշվին փոխանցվել է 6000000.0 (վեց միլիոն) ՀՀ դրամ գումար, սակայն վճարված գումարից հարկային մարմնի կողմից գանձվել են այնպիսի հարկատեսակների գումարները, որոնց վճարման ժամկետը թույլ էր տալիս դրանք մարել ավելի ուշ, ինչի արդյունքում Ընկերության ապրիլ ամսվա եկամտային հարկի, ինչպես նաև ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարները դրանց վճարման վերջնաժամկետը (20.05.2018թ.) վրա հասնելուց հետո, արտացոլվել են որպես ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության եկամտային հարկի, ինչպես նաև ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով ժամկետանց հարկային պարտավորություններն առաջացել են ոչ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով, այլ պայմանավորված են եղել ՀՀ հարկային մարմնի կողմից 2018թ. սկզբից ներդրված միասնական հարկային հաշվի նոր համակարգի աշխատանքի առանձնահատկություններով, հետևաբար նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների փաստի արձանագրումը չի կարող որակվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2018թ. թիվ 03/26-3/10936-18 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**